Օրհնության Աղոթք

Տերունական Աղոթք- Ներքին խաղաղության բանալին
Մաս 8

«Որովհետև քոնն է թագավորությունը և զորությունը և փառքը հավիտյանս.» Մատթեոս 6:13

Ինչպես եմ կարող Աստծոց օրհնվել

1. Աստված օրհնում է այն մարդկանց որոնք փնտրում են իր թագավորությունը

«Դուք նախ Աստծու արքայությունն ու նրա արդարությո՛ւնը փնտրեք, և այդ ամենը ավելիով ձեզ կտրվի:» Մատթեոս 6:33

Աստված ինչ կետերի մեջ է ուզում առաջին տեղը ունենալ իմ կյանքի մեջ

- Դրամ (Առակաց 3:5-6)
- Զբաղմունք (Ա Կորնթ՝ացիս 10:31)
- Հարաբերություն (Բ. Կորնթացիս 6:14)
- Ծրագիր (Սաղմոս 90:10)
- Դժվարություններ (Սաղմոս 50:15)

2. Աստված օրհնում է այն մարդկանց որոնք հենվում են իր զորության

«Երանի՜ այն մարդկանց, որոնց զորությունը քեզնից է…» Սաղմոս 84:5

«Ովքեր հավատով են, օրհնվում են հավատացյալ Աբրահամի հետ:» Գաղատացիս 3:9

Ինչպես եմ կարող հայտնել հավատքս Աստծոն՝

* Ռիսկ անեմ՝ որ աճեմ և հնազանդվեմ Աստծոն

«Օրհնյա՛լ լինի այն մարդը, որ Տիրոջն է վստահում, և Տերն է նրա վստահությունը:» Երեմիա 17:7

*Չ՛հրաժարվեմ՝ երբ հուսահատ կամ վախեցած եմ

«Երանելի է այն մարդը, որ համբերում է փորձության, որովհետև փորձվելով կստանա կյանքի պսակը, որ Տերը խոստացավ իրեն սիրողներին:» Հակոբոս 1:12

3. Աստված օրհնում է այն մարդկանց որոնք ապրում են իր փառքի համար

«Նա կօրհնի Տիրոջից վախեցողներին՝ փոքրերին մեծերի հետ:» Սաղմոս 115:13

Ինչպես կարող եմ ապրել Աստծո փառքի համար

* Իմ կարողություններից օգտվելով հավատացյալներին օգնելու համար

«Յուրաքանչյուր ոք ինչ շնորհ ընդունել է, այն իրա՛ր մատակարարեք որպես Աստծու զանազան շնորհների բարի տնտեսներ…որպեսզի ամեն բանում Աստված փառավորվի…» Ա Պետրոս 4:10-11

«Առատաձեռն մարդը կբարգավաճի:» Առակաց 11:25

«Միմյանց ընդունե՛ք, ինչպես որ Քրիստոսը ձեզ ընդունեց Աստծու փառքի համար:» Հռովմայեցիս 15:7

* Բարի լուրը բաժնեկցելով

«Ամենքի հետ ամեն ինչ եղա, որ ինչ էլ լինի, ոմանց փրկեմ: Այս ամենն անում եմ Ավետարանի համար, որպեսզի նրան հաղորդակից լինեմ:» Ա Կորնթացիս 9:22-23

«Եթե այս բաներն իմացաք, երանելի կլինեք, թե որ դրանք կատարեք:» Հովհաննես 13:17

Հաջորդ Կիրակի:

ԻՆՉՊԵ՞Ս ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵԼ ՔՈ ԿՅԱՆՔԸ (Մաս 1)

Հովիվ Սարօ Խաչիկեան